ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հուլիսի 2025 թվականի N 959 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի N 206-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 16-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ԱՐՄՖԻԼՏՐ» հայ-գերմանական համատեղ ձեռնարկություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 206-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) «ՀՈՒՄՔ ՈՒ ՆՅՈՒԹԵՐ» աղյուսակը 43-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 44-47-րդ կետերով.

«

44.	4823200009	Զտիչ թուղթ գլանափաթեթներով	Ներծծված, ակոսավոր, գույնը՝ վարդագույն	կգ	360	Գերմանիա	Գերմանիա	1 687 500	
45.	7223009900	Չժանգոտվող պողպատից մետաղալար	V2A մետաղից, 2մմ տրամագծով 1 գլանափաթեթ	կգ	175	Գերմանիա	Գերմանիա	393 750	
46.	4016930005	Ռետինե միջադիրներ	NBR 70	կգ	360	Գերմանիա	Գերմանիա	675 000	
47.	5404190000	Մոնոթել պոլիեսթերից	PLA, 3D տպիչների համար	կգ	360	Գերմանիա	Գերմանիա	2 430 000	

».

2) «ՀՈՒՄՔ ՈՒ ՆՅՈՒԹԵՐ» աղյուսակի «Ընդամենը» պարբերությունում «55 658 240» թիվը փոխարինել «60 844 490» թվով.

3) հավելվածի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերությունում «127 985 440» թիվը փոխարինել «133 171 690» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

17.07.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ